Մի ճրագ խաւարի դէմ իր թարթիչներն էր շարժում։

— Հանգստացէք։ Ես ոչ ոքի ոչինչ չեմ քարոզում, այդքան էլ միամիտ չեմ։ Ինձ համար հաճելի է խաւարի մէջ բարձր մտածել, եթէ ուզում էք, խոստովանել... Ես գիտեմ, որ մենք տարբեր լեզուներ ենք խօսում եւ երբեք մէկզմէկ չպիտի հասկանանք։ Եւ ո՞վ է իմանում, կարելի է աւելի լաւ է, որ մէկզմէկ չհասկանանք... Դուք կարծում էք, որ ես կառչած եմ բոլոր հին քարերին, որովհետեւ քարը ձեզ համար պարզ նիւթ է, մեռած մի կարծրութիւն, որը կարելի է տաշել, երբ ուզես եւ ինչպէս ուզես. քարը քանակ է, ծանրութիւն, արտաքին ձեւ... Ըստ ձեզ բոլոր այն սերունդները, որոնք Պարթենոնի մի կտոր սիւնի վրայ նորանոր խմաստների գիւտն են արել, պարզապէս յիմարներ են, եւ դուք Ակրոպոլիսի վրայ պիտի նախընտրէք ինքնաշարժների մի դարաժ չինել։ Արդ, ինչպէ՞ս չէք հասկանում, որ, եթէ արդի եւրոպական մարդկութիւնը ուրանայ եւ փչրէ դօրիական սիւնը՝ Արեւմուտքը ամբողջ իր անցեալով կը տապալի վիհի մէջ։ Հռոմը իր մաշուած ակռաներով հողերը կը խածնէ, կաթեդրալները փչուր փչուր կը լինեն, Ջիօտտոն կը գունաթափի, Կուատրոչենտոն թաւալ կուգայ անկարելի մի դժոխքի մէջ։ Կանտը, Ֆիխտէն, Հեգելը պապուասների նման հինդից աւելի իրենց մատերի վրա չեն կարող հաշուել եւ ձեր Մարքսը «Կապիտալը» գրելու տեղ գաւառաքաղաքի սինագոգում փայտէ կոճակ կը ծախի։ Մաշուած այն քարերը, որոնց մասին ես խօսում եմ, մարդկութեան մտքի եւ հոգու ծանրութիւնը պահող վիթխարի սիւներ են, եւ ոչ ոք իրաւունք չունի նրանց վրայ թեթեւօրէն նայելու։ Սեւանայ կղզու սպրդնած եւ չքաւոր քարերը դեռ շարունակում են խօսել հեռաւոր աշխարհներին եւ իրենց զսպուած զօրեղութիւնով ամէն օր, ամէն վայրկեան, լեռներից ադին եւ լեռներից անդին, կառուցում են հոյակապ եւ մեծդի շէնքեր։ Նրանք արարչական են, ինչպէս նախասկիզբ խօսքը, եւ բոցավառ առանցքի նման ժողովում են իրենց շուրջը ծովերը եւ երկիրները։

Ահա մութի մէջ մենք առաջանում ենք դրեթէ կուրացած։ Ամէն ինչ լքումի եւ մինակութեան հետ խուլօրէն մենախօսում է։ Խաւարը քարշ է գալիս վիրաւորուած մարմնի պէս, եւ լեռները ծանրօրէն լռում են։ Սակայն, ես այդ զգում եմ խորապէս, ինչ որ մի ուժ մեր վրայ հսկում է, հոգեկան եւ ֆիզիքական կենդանութիւն է տալիս, մտքի մէջ թեւեր է բաց անում եւ մեր, ուխտաւորի ցուպի վրայ կրակ է շարժում։ Ես գիտեմ, այդ ուժը գալիս է Սեւանայ կղզուց։ Գիշերը, հողերը, լիճը, լեռները եւ տունների մէջ փակուած մարդիկ՝ բանականութեան համար անհասկանալի, բայց շատ խոր եւ շատ իրական հաղորդակցութեան մէջ են։ Եւ վաղը, երբ խկական հայ մարդը կը լսի իր գլխի կատարին մի կտոր արշալոյս կը-բող աքլորի ձայնը եւ կը բանայ պատուհանը, նա, առանց գիտնալու, համակուած կը լինի գիշերային հաղորդակցութեան մէջ ստացած հոգեկան պաշարով եւ իր ամէն մի ժեստը, ամէն մի խօսքը եւ ամէն մի գործը կը ներդաշնակի խորախոր այն ոգու հետ, որը նրա էութեան կենտրոնն է կազմում։ Ուստի եւ սխալ է ձեր այն կարծիքը, որ ես դէմ եմ ձեր կառուցողական աշխատանքին։ Ես դէմ եմ ձեր երեւութական երազին, որը կոչուած է ուշացնելու, եթէ դարերի մէջ կառուցուած հայ ոգու բարձրաբերձ աշտարակի ճառագայթումը չարտացոլի։

Իմ Աստուածս թուաբանական հաշիւ չէ, այլ իրական Աստուած է։ Ես նրան գտել եմ անիշխանական կամքիս դաժան պեղումներով, երկար եւ դժուարին որոնումներից յետոյ, ցաւով եւ տառապանքով։ Ասում եմ ձեզ, նա՛ է կեանքը...

* * *

Արդէն մտել ենք Նոր-Բայազետ։

Մութ է։

Փոշի եւ լռութիւն։ Ուշ մնացած մի սայլ է անցնում։ Կովերը գնում են տատանուելով. գիւղացին շարժում է երկար մի ճըպոտ։

Հազուագիւտ պատուհանների ետեւ հազուագիւտ եւ աղօտ լոյսեր։ Մի պառաւ կին դէմքը պատուհանին է տալիս եւ մեզ չի տեսնում։

Մի եկեղեցի ուսերը դէմ է տուել երկնքի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան